ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անուն Ազգանուն**

   Անահիտ Ավանեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ առողջապահության նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Ֆրանսիայի Հանրապետություն, Էվիան լե Բեն, ս.թ. ապրիլի 5-7

4. **Հրավիրող կողմը**

   Պատվաստանյութերի և իմունիզացիայի գլոբալ դաշինք (GAVI)

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցություն Պատվաստանյութերի և իմունիզացիայի գլոբալ դաշինքի (GAVI) խորհրդի նիստին

6. **Քննարկված թեմաները**

   Քննարկվել են իմունականխարգելման ծրագրերի հետագա իրականացման կարևորագույն խնդիրներ, COVID-19 համավարակի ազդեցությունը իմունիզացիայի ընդհանուր ծածկույթի վրա, կայացվել են որոշումներ ծածկույթը բարելավելու վերաբերյալ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

   Ելույթիս ընթացքում հատուկ ընդգծել եմ միջին եկամուտ ունեցող երկրների համար «GAVI»-ի ռազմավարության փաստացի իրականացման կարևորությունը ընթացիկ ժամանակահատվածում: Սա համահունչ է «GAVI»-ի որդեգրած «չանտեսելով ոչ ոքի» (“leaving no one behind”) տեսլականին:

Խորհրդի նիստի ընթացքում նաև հանդիպում եմ ունեցել Հնդկաստանի առողջապահության, բարեկեցության նախարար և Քիմիական նյութերի, պարարտանյութերի նախարար Մանսուխ Մանդավիայի հետ՝ Հնդկաստանի կառավարության խնդրանքով:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Խորհրդի անդամների և Նախագահ Ժոզե Մանուել Բարոզուի կողմից առաջարկվեց ստեղծել «Իրականացնող երկրների» խումբ՝ բաղկացած խորհրդի բոլոր անդամներից, նրանց փոխարինողներից և կոմիտեների պատվիրակներից: Ձևավորվելիք խմբի նպատակն է զարգացող երկրների ձայնը լսելի դարձնել խորհրդի նիստերի ժամանակ՝ կարևոր որոշումներ ընդունելիս:

Հնդկաստանի առողջապահության և բարեկեցության, քիմիական նյութերի և պարարտանյութերի նախարարի հետ հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել սերտացնել առողջապահության ոլորտում երկու երկրների միջև համագործակցությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

11 ապրիլի, 2022 թ.